



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material







# ՀՅ ՊԱՐՊՈՒԼԻՒՄ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

## ՄՈԼԻՔԵՐԻ

### ՄԵԿ ԱՐԵՐՈՒԱՆՉԱԾ.

ԹԱՐԴՄԱՆԵՍՑ

## ՏԻԳՐԱՆ ԳԱՐԱԳԱՅԵԱՆ



ԶՄԻՒԹՆԻԱՆ

ՅՊԵԿԵՐՈՒԹԻՒՆ ՅԵՑԵԱԾ

1864

## ԱՆՁԹԱՔ

ՀԵ ՊԱՐՊՈՒԼԻՔ.	Անձելիդայի ամուսինը
ԺՈՐԺԻՎԻՆ.	Անձելիդայի հայրը
ՎԱԼԵՐԻՆ.	Անձելիդայի սիրահարը
ՔԱՅՕ.	Անձելիդայի աղախինը
ՍՆՃԵԼԻԳԱ.	Ժօրժիվինի աղջկելը
ՎԻԼԼԵՊՐԵ-ԲԵՆ.	ՎԻԼԼԵՊՐԵ-ԲԵՆ
ԼԱ ՎԱԼԼԵ.	
ՀԱՏԱԽՈՍ ԲԺԻՇԿ ՄԸ.	

Տեսաբանն է ի Փարիզ :

28 1930



42334-92

# ԱՅ ՊԱՐՊՈՒՏԻՒՆ

ԿԱՏԱԿԵՐԴՈՒԹՈՒՆ

Է Մ Ի Կ Ա Ր Ա Բ ՈՒ Խ Ե Ծ Ա Վ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋՏԱՆ

ԱՅ ՊԱՐՊՈՒԼԻՒՆ՝ առանցին.

Ատուղիւ այս աշխարհիս վրայ ամենէն գըժարադի անձը ես եմ։ Կին մը ունիմ որ զիս չարաչար կը տանջէ ու փոխանակ երեսը Ճերմակ բռնելու և իմ կամքս կատարելու, օրը քսան անդամ մեղքի կը խօթէ ինծի։ Տունը մնալու տեղը, ժուռ գալը կը սիրէ. Հազուելու կոկուելու խենդ, չեմ ալ Ճանչնարթէ որո՞նք են տեսնուած անձերը։ Ա՛Տ, խեղճդ Պարապուղիէ, ո՛րքան վատաբադդ ես, բայց և այնպէս առանց պատճոյ թող տալու չէ անոր օձիքը, թէ որ սպաննեմ զայն, Ճեռքս ինչ պիտի անցնի, վերջէն զիս ալ բեմը պիտի աանին։ Ուէ որ բանտ գնել տամ, գետինն անցնելուքը իր հասարակաց բանալիովը պիտի խուսափի անկէ։ Ի՞նչ ընեմ ուրեմն, բայց ահա պարոն Տօդթօրը, որ ասկէ կանցնի, ընելիքիս վրայ իրմէ խորհուրդ հարցընեմ։



ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԲԺՇԿԸ, ԱՅ ՊԱՐՊՈՒԼԻՒՆ

ԱՅ ՊԱՐՊՈՒԼԻՒՆ. Պարոն Տօդթօր, ես ալ հրամանքիդ փնտուելու կերթայի, հրամանոցդ խնդիրք մը ունիմ . . . ԲԺՇԿԸ. Անկիրթ, անզգ ամ, բժիշկի մը հետ այդ կերպ կը խօսիս, առանց զլիսարկդ հանելու, առանց ու-

շադրութիւն ընելու թէ “ Բասկետբոլ լսավ , նեմքը է բերա անե ” , առանկ անյարմարութեամբ խօսքդ կըսկսիս , փոխանակ յիշելու թէ “ Առվել , չեւ առվելուս սիս , որովհետք առջնօրօյ երեւենիս ” , ըստ նայինք , զիս ովկ կարծեցիր :

Ա. ՊԱՐՊՈՒՏԻՒՏԻՒՆ. Ծիտակը չէի գիտեր , չդիտացայ , ուստի ներումն կը խնդրեմ հրամանոցդմէ , խելքս գլուխս չէր , գիտեմ որ հրամանքդ աղնուական անձ մ'ես :

ԲԺԻՇԿԱ. Գիտեմ աղնուական բառին աղբիւրը ուստի ծնիլը :

Ա. ՊԱՐՊՈՒՏԻՒՏԻՒՆ. Կոռդէ Ա. իլլը ժուիթէն ծնի , կուղէ Օպէրվելլէն : Ես հրամանքդ տօդթօր կը ճանչնամ , հիմայ հարցուցածիս պատասխան պիտի տամս , այս ինչ դործին հրամանոցդ ձեռնոտութեանը կարօտ եմ :

ԲԺԻՇԿԱ. Գիտացիր որ մեկ անդամ բժիշկ չեմ ես , այլ 2—3—4—5—6—7—8—9—10 անդամ , Արտ . որովհին մուտքան մուտթիւնը հիմն է և թուոց առաջինը , և ես ալ բժիշկներուն առաջին կարգէն դասուելուս , բժըշկաց բժիշկը և իմաստոց իմաստունն եմ : Զրտ . որովհին տե ամեն բանի տեղեկանալու համար երկու օգտակար յատկութիւն կայ , որոնք են , միտք և լսողութիւն , և որովհին այս երկու յատկութիւնները ունիմ , ես ալ երկու անդամ բժիշկ կըլլամ :

Ա. ՊԱՐՊՈՒՏԻՒՏԻՒՆ. Ծատ աղեկ , տէր իմ , շատ աղեկ , բայց . . . .

ԲԺԻՇԿԱ. Յրտ . որովհին երբորդ թիւը , կատարելուի կանուանի , ինչպէս Արիսթոս ալ կըսէ . ես ալ կատարեալ անձ մը ըլլալուս , երեք անդամ բժիշկ կըլլամ :

Ա. ՊԱՐՊՈՒՏԻՒՏԻՒՆ. Բայց պարոն Տօդթօր . . . .

ԲԺԻՇԿԱ. Արտ . որովհին մուտքայութիւնը չորս դլուիէ կը բաղկանայ . բանականութիւն , բարոյականութիւն , ֆիզիքականութիւն , և բնագանցութիւն . ես ալ այս չորս կատարելութիւնները ունենալուս չորս անդամ բժիշկ կանուանիմ :

Ա. ՊԱՐՊՈՒՏԻՒՆ. Վատանան տանի զանոնք . անկարեց լիւթիւն չկայ , մտիկ ըրեք . կաղաշեմ :

ԲԺԿԱԿԱ. Յրտ . վասնզի Յ հասարակածն կայ , որոնք են սէք , ապդ , տարբերութիւն , էութիւն և արկածք , առանց ասոնց հմտանալու , անկարելի է խորհիլ , և ես ալ ասոնց օգուտը ձանջնալու և անոնց լիովին ծառայելու , հինգ անգամ բժիշկ կը լլամ :

Ա. ՊԱՐՊՈՒՏԻՒՆ. Համբերութիւնս կը հատնի :

ԲԺԿԱԿԱ. Յրտ . վասն զի վեցերորդ թիւը աջաստութեան թիւն է , և ես ալ մինչդեռ իմ փառացս համար անխոնջ և անդադար աշխատութեան կրդբաղիմ , վեց անդամ բժիշկ կոչուելու պատիւը ունիմ :

Ա. ՊԱՐՊՈՒՏԻՒՆ. ԱԼ ազատ էք , ուզածնուր չափ զըստացէք :

ԲԺԿԱԿԱ. Դրտ . վասն զի եօթներորդ թիւը երջան կութեան թիւն է և մարդկային կեանքը երջանկացը ներլու միջոցները ձեռքիս մէջ ունենալուս , կը հարկադրեմ յաճախ այս քերթուածը յիշել “օ՛եք ուստանեք+էպէտալօմ” : Ցրտ . վասն զի ութերորդ թիւը արդարութեան թիւն է , հաւասարութիւնը իրեն նպաստող , ես ալ բոլոր զործերս խոչեմութեամբ և անաշտու ողւով զործագրելուս ութ անգամ բժիշկ կը լլամ : Դրտ . որովհետեւ ինն մուսայք կան , որոնց ամենուն ես սիրելի եղած եմ : ԱՅրտ . որովհետեւ առանց միւս թիւերը յիշելու չենք կրնար տասեն անցնիլ . ինք տիեզերական թիւ մ’է , իմ մէջս բավանդակուած են բոլոր միւս բժիշկները , կը տեսնես , ուրեմն , որ իրաւամբ մէկ , երկու , երեք , չորս , հինգ վեց , եօթն , ութն , ինն , տասը անգամ բժիշկ կոչուելու բարեբաղդութիւնը ունիմ :

Ա. ՊԱՐՊՈՒՏԻՒՆ. Եսոնց ամենն ալ շուտիկը տանի : Ես ալ կարծեցի թէ փիլիսոփայ մէկու մը հանդիպեցայ , որով օգուտ պիտի քաղէի , չպիտցայ թէ ծխանի մաքրիչ

Մ'է եղեր հանդիպածս , որ հարցուցածիս առանց զու հացուցիչ պատասխան մը տալու մատերուն հետ կղքու նու . մէկ , երկու , երեք , չորս , հինգ , վեց , եօթն , ութն , ինն , տասը , աս ի՞նչ պիտի ըլլայ . իմ հարցուցածս աս չէ հրամանքիդ ու հաւատացէք ինձ . թէ որ զոհ ընէք զիս , ինչ որ հրամայէք՝ պիտի շնորհեմ բոլորով սրտիւ , ստակ իսկ եթէ կամիք :

ՔՅԻՇԿԲ . Ի՞նչ , ստակ պիտի տաս :

ԱՀ ՊԱՐՊԱՏԻՒԹԵ . Այսո՛ , ոչ միայն ստակ , հապա ուրիշ ի՞նչ որ ուղես :

ՔՅԻՇԿԲ . Ի՞նչ , զիս մուրացկա՞նի տեղ կըդնես . ես ստակի գլուխ ծոռղներէն չեմ , բարեկամս , թէ որ ու կիով լցուն քսակ մ'ալ տաս ու այս քսակը հարուստ տուփի մը մէջ բովանդակի , այս տուփն ալ անդիւտ պատեանի մը մէջ , ու այս պատեանը սքանչելի սնտուկի մը մէջ ըլլայ , այս սնտուկն ալ խիստ հետաքրքրական խուցի մը մէջ , այս խուցն ալ զարդարուն սենեկի մը մէջ ըլլայ , այս սենեակն ալ վայելուչ սրահի մը մէջ ու այս սըրահը փառաւոր դղեկի մը մէջ , այս դղեակն ալ անհամատ միջնաբերդի մը մէջ ըլլայ ու այս միջնաբերդը հոչակաւոր քաղքի մը մէջ զանուի , ու այս քաղաքը պտղաբեր կղղւոյ մը մէջ , ու այս կղղին ընչաշատ զաւառի մը մէջ , այս զաւառն ալ բարդաւճեալ միավետական երկրի մը մէջ ըլլայ , այս երկիրն ալ բոլոր աշխարհիս մէջ , ուր պիտի ըլլան այս բարդաւճեալ երկիրը , այն ընչաշատ զաւառը , պաղաքեր կղղին ու այն հոչակաւոր քաղաքը , անհամատ միջնաբերդը , փառաւորդղեակը ու այն վայելուչ սրահը , այն զարդարուն սենեակը , այն հետաքրքրական խուցը , այն անդիւտ պատեանը ու այն զեղեցիկ տուփը , որու մէջ պահուած պիտի մնայ ոսկիով լցուն քսակը , քեզ ալ , ստակդ ալ ստատանան տանի :

Պատուա իւնէ :

Ա. ՊԱՐՊՈՒԼԻԿԻ. Ա. Համբերութիւնս հատաւ . Էօֆ ,  
չեմ կրնար շունչս առնուլ . տօդթօրի մը պէս հագուած  
ըլլալուն՝ կարծեցի թէ հետը ստակով պէտք է խօսիլ .  
բայց քանի որ ստակ չէ խնդրածը , ասկէ համով բան  
կայ . վազեմ երթամ զինքը գտնեմ : Կենէ :

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԱՆՁԵԼԻԳԱ . ՎԱԼԵՐԻՈՍ . ՔԱԹՕ .

ԱՆՁԵԼԻԳԱ . Շատ շնորհակալ պիտի ըլլամ , պարոն ,  
եթէ երբեմն կամփը ընկերանալ ինծի հետ տեղ մը  
զացած ատենս , որովհետև էրիկէս բնաւ չեմ ախորժիք .  
անձիկա զեղծ , անառակ , արբեցող ու գինեմոլին մէկն  
է . անոր հետ մնալը ինծի տանջանք մ'է . ձեղ կը թու-  
զում երեակայել այսպիսի շինական վերջապէս վայրենի  
մարդի մը քով մնալով ինչ զոհունակութիւն կըստա-  
նայ մարդս :

ՎԱԼԵՐԻՈՍ . Անարժան տեղը զիս պատուել կուզէք ,  
տիկին , պատրաստ եմ հաւատարմութեամբ . ձեղ ծառա-  
յելու :

ՔԱԹՕ . Խօսքերնիդ փոխեցէք , ահա անզգամը կը  
մօտենայ :

## ՏԵՍԱՐԱՆ Գ .

Ա. ՊԱՐՊՈՒԼԻԿԻ . ՎԱԼԵՐԻՈՍ . ԱՆՁԵԼԻԳԱ . ՔԱԹՕ .

ՎԱԼԵՐԻՈՍ . Տիկին , սառւդիւ կը ցաւիմ տրտմալից  
լուր մը տալու ձեզի , բայց տարակոյս չկար որ զայն ու-  
րիշէ մը պիտի իմանայիք , զիտէք որ եղայրնիդ ան-  
հանդիստ է . . . . :

ԱՆՁԵԼԻՔԱ. Բաւական է, պարո՞ն, շնորհակալ եմ ոք  
այս ծանրութեան յանձնառու եղաք:

ԱՀ ՊԱՐՊՈՒԼԻՔ. Չ' առաջ, առաջ կըսեմ, նօտարին  
երթալու ալ հարկ չմաց, ըստ որում հոն չդացած աւ  
հա կը տեսնեմ հոս անհողութեանս մէկ պառվղը . . . .  
թշուառական կին, հոս օտարականի մը հետ, միւս օր  
այնքան կողմդ բռնեցի որ այսօր քիթէս կը հանես:

ԱՆՁԵԼԻՔԱ. Ինչո՞ւ այդպէս կրակ կը կարիք, հայր իմ:  
Այս պարո՞նը եղոօրս անհանդ իստ ըլլալուն լուրը կու-  
տայ ինձ:

ՔԱԹՕ. Գիետինն անցնի սա անպիտան պառաւը, քե-  
զի հանգիստ չպիտի թողու:

ԱՀ ՊԱՐՊՈՒԼԻՔ. Երկուքնիդ ալ ճամբայէ կելնէք,  
դուն, Քաթօ, կինս դլին կը հանես, անոր ծառայու-  
թեանը մէջ ըլլալէդ ՚ի վեր հիմայ կէսը չարժէր ինչ  
որ կարժէր դուն չեկած:

ՔԱԹՕ. Լեզուն ալ կարճ չէ:

ԱՆՁԵԼԻՔԱ. Սա արբեցողը իւր վիճակին մէջ թող,  
չես տեսներ, այնքան խմած է որ ըստը դրածը չպիտեր,  
բերնէն աբեղ ցրեղ դուրս կը թափէ:



## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՃՈՐԺԻՎԻՏԱ. ՎԻԼԱՐՊԸՆՔԻՆ. ԱՆՁԵԼԻՔԱ. ՔԱԹՕ.

ԱՀ ՊԱՐՊՈՒԼԻՔ

ՃՈՐԺԻՎԻՏԱ. Դարձեալ կոիւ ունին մէջերնին:

ՎԻԼԱՐՊԸՆՔԻՆ. Տեսնենք ինչքն կու դայ:

ՃՈՐԺԻՎԻՏԱ. Ինչո՞ւ կը կոռւիք, բարեկամք, դուք  
տան մէջ հանգստութիւն պիտի չունենաք յաւիտեան:

ԱՀ ՊԱՐՊՈՒԼԻՔ. Սա թշուառական կինս ինծի դինով  
կը կանչէ: Ահա այսպէս ծնողացդ առջև ալ քեզի պըղա-  
տիկ պիտի թողում:

ՖՈՐՖԻԳԻՒՄ . Երկուքնիդ ալ զայէք ծովը ինկէք :  
ԵՐ ՊԱՐՊԱՏՆԵՐ . Ի՞նչ ընեմ ես , ան է սկսողը :  
ՔԸԹՕ . Ա՞նիծեալ ըլլար այն բռպէն որ Ա՞նձելիդան  
իրեն կնութեան տռւիք :  
ԱՌԱՅՈՒՔԵՆ . Դառն լոէ . բարեկամիք , հաշտուցիք :



## ՏԵՍԱՐԱՆ Զ .

ԱՌԱՅՈՒՆԵՐԼ . ԲԺԻՇԿԱՐ .

ԲԺԻՇԿԱՐ . Ի՞նչ կայ , աս ի՞նչ աղմուկ է , կոխնիդ  
ի՞նչ է , աղաղակ որոտում , բոլոր թաղը ոտքի հանեցիք :  
Ի՞նչ կայ , պարոններ , ի՞նչ կայ , տեսնենք , միթէ չենք  
կրնար գարման մը ընել : Ես ձեր հաշտեցուցիչը ըլլ-  
լամ , ձեր տանը հանդարտութեանց պատճառ ես ըլլամ :  
ՖՈՐՖԻԳԻՒՄ . Փեսաս և աղջիկս իրարու հետ կոռւեր են :  
ԲԺԻՇԿԱՐ . Ինչու , ինչ է պատճառը , ըսէք , սիրե-  
լիք , ես ձեզ հաշտեցնեմ :

ՖՈՐՖԻԳԻՒՄ . Պարոն . . . .

ԲԺԻՇԿԱՐ . Բայց քիչ խօսքով :

ՖՈՐՖԻԳԻՒՄ . Այս , զլիարկնիդ դրէք , կաղաչեմ :

ԲԺԻՇԿԱՐ . Գիտէք զլիարկ բառը ուսկէ՞ ծնունդ կառնու :

ՖՈՐՖԻԳԻՒՄ . Ո՛չ .

ԲԺԻՇԿԱՐ . Ուրեմն ըսէք ի՞նչ է կոխնուն պատճառը :

ՖՈՐՖԻԳԻՒՄ . Ահա եղածը պատմեմ :

ԲԺԻՇԿԱՐ . Չեմ կարծեր որ հոս շատ կեցընէք զիս .  
ստիպողական գործեր ունիմ , որոնք քաղաքը ինձ կըս-  
պասեն , բայց ձեր տունը հանդարտեցընելու համար ,  
կուղեմ քանի մը վայրիեան հոս մմալ :

ՖՈՐՖԻԳԻՒՄ . Այս ալ քանի մը բռպէի բան է :

ԲԺԻՇԿԱՐ . Ո՛չ , ո՞րքան դժացուցիչ բան պիտի ըլլ-  
լայ , եթէ ըսէլիքդ երկու խօսքով միրատելու ըլլաս :

Վատ խօսողները չեմ սիրեր ես, անոնք փոխանակ ունեցենք բութիւն ընկլու, խօսելով՝ երբեմն այնքան զըլուխ կը ցաւցընեն որ փայտ մը առնես քիչ մ'ալ դուն իրենց զըլուխը ցաւցընես։ Այս, պարկեշտ մարգու պարտաւորութիւնն է քիչ խօսիլ։

ՔՕՐՔՎՊԻՒՍ. Գիտցիք ուրեմն որ . . . :

ԲԺԻՇՎԼ. Այլրատ իւր աշակերտացը երեք բան կը պատուիրէր. գործոց մէջ չափաւորութիւնն, զգաստութիւն կերակրոց և ըմպելեաց և խօսիլ համառօտարար։

ՔՕՐՔՎՊԻՒՍ. Այս ես ալ նոյնը պիտի ընեմ։

ԲԺԻՇՎԼ. Քիչ խօսքով, առանց մեծարանաց, երկարաքանութեամբ ինքը զինքութիւններ, շուտ, շուտ, պարոն ձօրժիպիւս, առապարենք, երկայնաբանութիւնը մէկդիթ թող։

ՔՕՐՔՎՊԻՒՍ. Թա՞ղ որ խօսիմ, պարոն բժիշկ։

ԲԺԻՇՎԼ. Պարոն ձօրժիպիւս, շատ կը խօսիք, ուրիշ մը, ուրիշ մը պէտք է որ ըսէ։

ԱՐԱՀԱՐԵՔԵՆ. Պարոն բժիշկ, զիտցիք որ . . . :

ԲԺԻՇՎԼ. Ապուշ, անպիտան, դուն տղէտ մ'ես, պատմութիւնը կսկսիս մինչև որ յառաջաբան մը չկցես, ուրիշ մը, ուրիշ մը պէտք է որ պատմէ, Օրփորդ, ըսէք ինձի պարագայիւք ինչ որ պատահած է։

ԱՆՃԵԼԻԳԱ. Կը տեսնէք սա թշուառական, անիծեալ երիկս։

ԲԺԻՇՎԼ. Կամաց կամաց, կաղաչեմ, պարոնը յարդեցէք երբ ինձի պէս աննման բժիշկի մը առջեն կը գըտնուիք։

ԱՆՃԵԼԻԳԱ. Բժշկութիւնդ քեզի ըլլայ, ես ալ բըժիշկ եմ երբոր կամիմ։

ԲԺԻՇՎԼ. Դառն ալ բժիշկ ես, երբոր կամիս։ Ա՛ս, պահէ, գէմքդ ալ այդպէս կը վկայէ, դուն շաղկապէն, յօդերէն, արականէն, հոլովմունքէն, սեռականէն ու

Համաձայնութենէն՝ ի զատ ուրիշ բան չես սիրեք։ Այս  
պէտք է ըսէ, ինչ է կոխնուդ պատճառը։

ԱՅ ՊԱՐՊՈՒՆԻՔ. Պարոն բժիշկ . . . :

ԲԺԻՇԿ. Այս, ինչ հաճելի բան է, բժիշկ բառով  
սկսիլը, որքան քաղցր կը հնչէ ականջիս։

ԱՅ ՊԱՐՊՈՒՆԻՔ. Ե՞ս, պարոն բժիշկ, Ասուծոյ սի-  
րոյն համար ըլլայ, ականջ ստուեք, կաղաչեմ։

ԲԺԻՇԿ. “Առէ եւուօ”, ըստ Կիկերոն։

ԱՅ ՊԱՐՊՈՒՆԻՔ. Մտիկ պիտի ընէք, ապա թէ ոչ  
հիմա այդ բժշկական գլուխը պիտի ջախջախեմ։ Ի՞նչ  
պիտի ըլլայ աս։

ԱՅ Պարուուլիկ, Անձելիտս, Ժօրժիուլիս, Վիլ-  
լարժեն սուլելով իւխախն պարունակը ըսել, բժիշկը շանոնդ կը  
հանդարձնեցնէ հաշուսնիւն առողջութով։ այս մշացին ամենուը միա-  
բերան կը խօսին։ ԱՅ Պարուուլիկ բժիշկն սուլեն շուան օշ-  
իանցնե, կսկսի հաս հաս առշետը և բժիշկը իւնախն ՚ի վար կը  
դլուրի։ ԱՅ Պարուուլիկ շուանը դեռ ՚ի երեն կը առշէ, բժ-  
իշկը անդարձար կը խօսի, և համելով էւր իւրասունուները  
հաշուսը կուշի, անոնի որ իւր նե ինը և քերին դաստողը։  
Բժիշկ և ԱՅ Պարուուլիկ կ'անելը լուսանան։

ՃՕՐԺԻՊՈՒՏՍ. Գնա, աղջիկս, տունդ քաշուէ, և  
երիկիդ հետ սիրով վարուէ։

ԱՆԴՐԵՎԻԼՔԻՆ. Անաք բարեաւ ամենուդ ալ։

Ա իւլյուրէն, Ժօրժիուլիս և Անձելիտս դուրս իւնեն։

### ՏԵՍԱՐԱԿ Ե.

ՎԱԼԵՐԻՈՍ. ԱՅ ՎԱԼԻԿ.

ՎԱԼԵՐԻՈՍ. Անորհակալ եմ, պարոն, որ ինձի հա-  
մար յոդնեցաք, մէկ ժամէն կերթամ հոն։

ԱՅ ՎԱԼԻԿ. Եթէ քառորդ մը ուշանաս, պարահան-  
դէսը ցրուած պիտի դտնես, այն ատեն բաղդը պիտի

չունենաս քու սիրոյդ առարկան հոն տեսնելու, թէ որ  
չիմա այս ժաման չգոս :

ՎԱԼԵՐԻԱՆ. Երթանք ուրեմն : Գյուղը իւնկն :

### ՏԵՍԱՐԱԿ Բ.

ՎԱՃԵԼԻԳԻԱ՝ առանձին .

Այս ժաման երիկս հոս չզանուիր, երթամ դրացւոյս  
պարահանդէսը անդամ մը դառնամ զամ, իրմէ առաջ  
կուզամ ես : Ո՞վ զիտէ ուր է ինքը, անշուշտ զինետու-  
նին մէկ կողմը փոռած պիտի ըլլայ, թշուառականը պի-  
տի շտեսնէ իմ զուրս ելնելս, իւր շունին պէս տունը  
ինծի մինակ կը թողու այսպէս : Կերթայ :

### ՏԵՍԱՐԱԿ Ծ.

ՎԱՃԵԼԻԳԻԱ՝ առանձին .

Այդ սատանայ բժշկին հետ ասանկ կլուխ կելնուի .  
իր բոլոր բժշկութիւնն ալ, դիտութիւնն ալ իրեն հետ  
խաւրեցի : Երթանք նայինք մեր տանտիկինը ինչ կերա-  
կուր պատրաստած է : Գյուղը իւնկ :



### ՏԵՍԱՐԱԿ Ը.

ՎԱՃԵԼԻԳԻԱ՝ միուսունք .

Ոեղք որ ուշ մնացի, պարահանդէսը ցրուած դտայ :  
Եմնաքը դուբս ելնելու կէտին՝ ես ներս մտնել կը ջա-  
նայի . բայց փոյթս չէ, ուրիշ անդամ տեղը կը լցը-  
նենք . բան մը չձեացընեմ, տուն դառնամ. ո՛չ, դուռը  
դոցեր են, Քայլօ, Քայլօ :

## ՏԵՍԱՐԱՆ ԺԱ

ԱՅ ՊԱՐՊՈՒՏԻՒՆ՝ պարունականին. ԱՆՁԵԼԻԳԱ.

ԱՅ ՊԱՐՊՈՒՏԻՒՆ. Քամթօ, քամթօ. ԷՇ, ուր է քամթօն. այս տաենս դուն ուր կը գտնուիս :

ԱՆՁԵԼԻԳԱ. Բաց դուռը որ անանի ըսեմ:

ԱՅ ՊԱՐՊՈՒՏԻՒՆ. Եշկած տեղդ դարձիր. թէ որ կուզես փաղոցը մնացիր. այս ժամուս ես դուռ չեմ բանար. ի՞նձի մինակ կը թողուս, հէմ:

ԱՆՁԵԼԻԳԱ. Ի՞նչ ընեմ. քովդ եղած ատենս կոխիշ դլուխ առած չունինք : Ի՞նչպէս կուզես որ ընեմ :

ԱՅ ՊԱՐՊՈՒՏԻՒՆ. Տուն մնալ, կերակուր պատրաստել, տանաիլին ըլլալ, որդուցդ վրայ խնամք տանիլ. բայց ինչու կերկարեմ. բարի զիշեր, հաւնած տեղդ դնա :

ԱՆՁԵԼԻԳԱ. Պիտի չքանա՞ս դուռը :

ԱՅ ՊԱՐՊՈՒՏԻՒՆ. Այս, պիտի չքանամ:

ԱՆՁԵԼԻԳԱ. Իմ սիրական էրիկս, բաց կըսեմ:

ԱՅ ՊԱՐՊՈՒՏԻՒՆ. Ա՛յ, կոկորդիլոս, զիս մատնելու համար անուշ լեզու կը բանեցընես :

ԱՆՁԵԼԻԳԱ. Բաց, կաղաչեմ, բաց :

ԱՅ ՊԱՐՊՈՒՏԻՒՆ. Գիշեր բարի :

ԱՆՁԵԼԻԳԱ. Ի՞նչ, պիտի չքանա՞ս :

ԱՅ ՊԱՐՊՈՒՏԻՒՆ. Ո՞չ :

ԱՆՁԵԼԻԳԱ. Զես զթար այնպիսի կնկան մը վրայ որ զքել յանչափս կը սիրէ :

ԱՅ ՊԱՐՊՈՒՏԻՒՆ. Խենաս ալ, պիտի չքանամ. ինծի հրապուրեցիր դուն, խարեցիր զիս :

ԱՆՁԵԼԻԳԱ. Գիտես որ եթէ համբերութեանս չտիը հատնի, ու անդամ մը բարկութեան ելնեմ, անանի բաներ կընեմ որ վերջէն կը զշաս :

ԱՅ ՊԱՐՊՈՒՏԻՒՆ. Անառամի կին, ի՞նչ կընաս ընել :

ԱՆՁԵԼԻԳԱ. Թու որ չքանաս, հիմայ այս դուանդ սեա-

մին վլրայ ինքըզինքս պիտի սպաննեմ ու ծնողքս ասկից  
անցած տաեննին՝ հոս գետին փռուած պիտի զանեն  
զիս, այն տաեն քեզի կախաղան պիտի տանեն:

Ա. ՊԱՐՊՈՒԽԻ. Ա՛հ, ա՛հ, ա՛հ, ի՞նչ գլուխ,  
տեսնենք երկուքնէս ո՞րը առաջ պիտի կորսնցընէ դայն,  
գուն այդ բանը ընելու համար այնքան ապուշ չես:

ԱՆՁԵԼԻԳԱ. Ջե՞ս հաւատար: Ահա դանակս պատ-  
րաստ է, թէ որ այս ժամուս չբանաս, կուրծքիս պիտի  
խօթեմ զայն:

Ա. ՊԱՐՊՈՒԽԻ. Աղէկ զգուշութիւն ընես, կաղաչեմ:  
ԱՆՁԵԼԻԳԱ. Պիտի չբանաս ուրեմն:

Ա. ՊԱՐՊՈՒԽԻ. Հարիւր անդամ ըսի, պիտի չբանամ,  
պիտի չբանամ, զարի ինքըզինքդ, սպաննուէ, մեռիր,  
փոյթս չե:

ԱՆՁԵԼԻԳԱ. ( զունել իւ յւացընէ . ) Ուրեմն մնաս բար-  
եաւ, ա՛հ, կը մեռնիմ:

Ա. ՊԱՐՊՈՒԽԻ. Անմտութիւնը պիտի ունենայ միթէ-  
այս բանս ընելու: Ճշրազը առնեմ իջնեմ նայիմ ըս-  
տոյդ է ըսածը:

ԱՆՁԵԼԻԳԱ. Աղէկ քթէն բռնեցի: Թէ որ կարենայի  
իրմէ առաջ դռնէն ներս ցատկել ու զինքը զուրս թո-  
ղուլ, իր ըրածին փոխարէնը պիտի ընդունի:

Ա. ՊԱՐՊՈՒԽԻ. Ջըսի՞ որ ինքը այնքան ապուշ չէ  
այս բանս կարող ըլլայ գործադրելու: Ա՛հ, ի՞նչ օ-  
գուտ, նայէ ինչպէս կը փախչի, կոնակին քանի մը հա-  
րուած իջեցնելու ժամ էր: Երթամ հանդչիմ, ո՛հ,  
ո՛հ, դուռը ինքնիրեն կը գոցուի: Կաթօ, Կաթօ,  
դուռը բայց:

ԱՆՁԵԼԻԳԱ. Կաթօ, Կաթօ, հէմ, Կաթօն ի՞նչ  
ըրաւ: Պարոն զինով, այս ժամուս դուրսը ի՞նչ զործ  
ունիս: Օնողքս հիմա որ ասկէ պիտի անցնին, պիտի  
տեսնեն թէ որո՞ւ է յանցանքը, թշուառական մարդ,

կինետունէն ասդին եկած չունիս , կը թողուս թշուառ  
կին մը իր չորս զաւկըներովս դրացիէն հաց մուրալ :

ԱՅ ՊԱՐՊՈՒԼԻՔ . Բայց դուռը , ժանաախտ կին , ապա  
թէ ոչ հիմա զլուխդ կը ջախջախնմ :

### ՏԵՍԱԲԱՆ ԺԲ .

ԱՌԱՋՄԱՆՆԵՐԸ , ՔՕՐՔԻՊԻՒՄ . ՎԻԼԼՊՐԵՔԵՆ .

ՔՕՐՔԻՊԻՒՄ . Դրաբձեալ կոիւ :

ՎԻԼԼՊՐԵՔԵՆ . Դուք հաշտուած պիտի չմնաք , ի՞նչ  
է աս :

ԱՆՁԵԼԻԳԸ . Զեք տեսներ ինչպէս դինով է . այս ժա-  
մուս տուն կը դառնայ :

ՔՕՐՔԻՊԻՒՄ . Այս ժամուս տուն կը դառնաս , փեսայ ,  
դուն իրեւ ընտանեաց բարի հայր մը կանուխէն տուն  
դտնուիլ ու կնոջդ հետ սիրով ապրիլ պէտք ես :

ԱՅ ՊԱՐՊՈՒԼԻՔ . Գլուխս կտրեցէք թէ որ տունէն  
պակսեցայ նէ : Այս դիմացը նստող պարոններուն հար-  
ցուցէք մէյ մը , թէ ովէլ է այս ժամուս տուն դարձողը ,  
ես մի թէ ան : Ա՛Հ , անմեղութիւնը ինչպէս քօղի տակ  
ծածկուած կը մնայ :

ՎԻԼԼՊՐԵՔԵՆ . Ա՛Հ , Է՛Հ , հաշտուեցէք , ներումն  
խնդրէ իրմէ :

ԱՅ ՊԱՐՊՈՒԼԻՔ . Ի՞նչ , ես ներումն խնդրեմ , աւելի  
աղէկ կուզեմ զլուխս պատին զարնել քան թէ . . . . .  
անանկ նեղացած եմ որ . . . . :

ՔՕՐՔԻՊԻՒՄ . Հայ աղջիկս , աեսնեմ , դրկէ էրիկդ ,  
ձեռք ձեռքի տուէք :

## ՏԵՍԱՐԱՆ ՃԳ.

ԱՌԱՋՔԵՆԵՐԸ. ԲԺԻՇԿԱՅ պարունակնեն քէշերային  
ՔԵՂՅԵՐՆԼ ու մէկ շաղինլ:

ԲԺԻՇԿԱՅ. Ե՛ս, աս ի՞նչ է, ի՞նչ, դարձեալ մէջերնիդ  
կուի ունիք, ձեզմէ հանգստութիւն պիտի չունենանք  
թաղին մէջ, փոթորիկ, աղաղակ ու որոտում, գուք  
բնաւ պիտի չհաշտուիք իրարու հետ :

ՎԻԼԼԱՊԵՏՔԵՆ. Փոթորիկը անցաւ, պարոն բժիշկ,  
խաղաղութիւնը կը տիրէ :

ԲԺԻՇԿԱՅ. Խրարու հետ խաղաղեցան կըսես, կուզէք  
որ Արիսթոտի մէկ զլուխը կարդամ այս մասին :

ՎԻԼԼԱՊԵՏՔԵՆ. Խրկա՞ր զ լուխ է :

ԲԺԻՇԿԱՅ. Զէ, չէ, շատ կարճ. վաթսուն պինտ  
պինտ ութսուն երեսէ կը բաղկանայ :

ՎԻԼԼԱՊԵՏՔԵՆ. Ուրեմն զիշեր բարի ձեղ :

ՖՈՐՖԻԳԻՒՄ. Կորունց զլուխ պիտի ցաւցընէ :

ԲԺԻՇԿԱՅ. Զէք ուզեր :

ՖՈՐՖԻԳԻՒՄ. Զէ, չէ :

ԲԺԻՇԿԱՅ. Անանկ էնէ մնաք խաղաղութեամբ. քանի  
որ այսպէս է զիշեր բարի կը մաղթեմ “ Լոնինէ պօնաս  
նօդա ” :

ՎԻԼԼԱՊԵՏՔԵՆ. ԱԵ՞նք ալ երթանք մօտակոյ ճաշա-  
րանը աղլոր լնթրիք մը ընենք :

